


Մոտակա դրամական ռեֆորմի հետեւանքներից ազգաբնակչության շահերը պաշտպանելու նպատակով, «ՄԵՐԿՈՒՐԻ» ձեռնարկությունը երկու շաբաթով հայտարարում է 1961-1992 թթ. թողարկման թղթադրամների ընդունում 6 ամիս ժամկետով, որի դիմաց առաջարկում է 105%:

Փաստորեն Ձեզ հնարավորություն է ընձեռվում ոչ միայն կրկնապատկել Ձեր կարողությունը, այլեւ, փոխել Ձեր տրամադրության տակ գտնվող հին թողարկման թղթադրամները նորերով:

ENTERPRISE Mercury

Երեւան, Սայաթ Նովա 19,
«Անի» հյուրանոց, 6-րդ հարկ,
636 սենյակ հեռ. 59-46-36

## Ով ինչպես առեւտուր է անում, այնպես էլ ապրում է

ԱՄՆ-ի ներմուծման եւ արտահանման ծավալը 1992 թվականին հասավ 1 տրիլիոն դոլլարի ռեկորդային նշագծին, մինչդեռ համաշխարհային առեւտուրը հասել էր 3,8 տրիլիոն դոլլարի ռեկորդային մակարդակին, հաղորդեց Վաշինգտոնում գտնվող Միջազգային վալյուտային հիմնադրամը: ԱՄՆ-ի ներմուծումը ավելի քան 552 միլիարդ, իսկ արտահանումը ավելի քան 447 միլիարդ դոլլար կազմեց 105,216 միլիարդ դոլլար բավական մեծ պակասորդի պայմաններում: Չնայած առեւտրի նվազ մեծ ծավալներին, Ճապոնիան ունի ավելի քան 107 միլիարդ դոլլար դրական առեւտրական հաշվեմնացորդ: Համապարփակ ընդգրկմամբ անցյալ տարի համաշխարհային առեւտրի ծավալն աճել է 7 տոկոսով, հաղորդեց ՄՎՀ-ն: Նախկին խորհրդային Միության երկրները եւ նրանց որոշ դաշնակիցներ նույնիսկ ավելի լավ ցուցանիշներ են հասել առեւտրի համաշխարհային միտումների շրջանակներում: «Երկրների այդ խմբից կատարված արտահանումը 1992 թ. ավելացավ 7,7 տոկոսով, իսկ շրջելով նախորդ տարում 2,5 տոկոս կազմած անկումը, ասվում է զեկուցագրում: Ներմուծումը շարունակում էր աննշան չափով կրճատվել»: Համատեղ վերցրած նախին խորհրդային Միության 15 հանրապետությունները ներմուծման նկատմամբ ունեն արտահանման փոքր գերակշռություն, որ կազմում է 850 միլիոն դոլլար: Սակայն նրանց ընդհանուր միջազգային առեւտրական գործառնությունները զգալիորեն պակաս էին արեւմտյան պետությունների համեմատությամբ: Զարգացող երկրները իրենց առեւտուրը, հատկապես ներմուծումը, զգալիորեն ավելի շատ են ավելացրել, քան արդյունաբերական պետությունները, այդ միտումը պահպանելով նաեւ անցյալ տարի:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

## «Ադիդասը» մտադիր է նվաճել ռուսական շուկան

Չնայած 1992 թվականը «Ադիդասի» համար վնասաբեր էր (ընկերությունը 149 մլն մարկի վնաս կրեց), այդ հանրահայտ ընկերությունը շարունակում է «գրոհել» մարզական հագուստեղենի եւ գույքի համաշխարհային շուկան: Իսկ հիմնական ուղղվածությունը դեպի Արեւելյան Եվրոպա ու Չինաստան է: Բացի նշվածներից, «Ադիդասին» հատկապես գրավում է ռուսական շուկան: Ու թեպետ Ռուսաստանի ազգային օլիմպիական կոմիտեն 1992-ից հրաժարվել է «Ադիդաս» ընկերության հովանավորությունից (ֆիրման մոտ 40 տարի նախկին ԽՍՀՄ օլիմպիական թիմի անփոփոխ հովանավորն է եղել), չորս տարով պայմանագիր կնքելով մեկ այլ՝ «Ռիբոկ» ոչ պակաս հայտնի ֆիրմայի հետ, այնուամենայնիվ «Ադիդասը» որոշակի ծրագրեր ունի՝ կապված Մոսկվայում մարզական կոշիկեղենի արտադրության կազմակերպման եւ մի քանի «դուստր» ձեռնարկություններ ստեղծելու հետ: Ընդ որում, առաջինի իրականացման համար անհրաժեշտ 10 միլիոն մարկը ֆիրման հույս ունի ստանալ Ռուսաստանի կողմից իրեն վճարվելիք համարժեք պարտքից:

ԷԿՈ-ՊՐԵՍ

Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւաւորում եւ համակարգչային նկարիչ ՊՈՂՈՍ ՂԱԼԱՓԵԱՆ

digitised by A.R.A.R.@